ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

«Արձագանք» շաբաթաթերթի № 13-ի առաջնորդող յոդուածում ի միջի այլոց հետևեալ մտքն է յայտնուած. «Անլայտ, անանուն, տղէտ և դեռ ա-չակերտական նստարանի վերայ բազմող երիտասարդներ ասպարէզ են դուրս գալիս այնպիսի գործիչների դէմ, որոնց չնորհիւ ամբողջ ներունդ-ներ են կրթուել։ Ցաւոնի իրողութիւն է և ամօթաբեր փաստ, որ մի ամսա-գրի էջերում քանի մի այդպիսի համբակներ Դամառ-Բաթիպալի գլխին դատաւոր նստան»...

Այս ակնարկութիւնը վերաբերում է մի խումբ ուսանողների, ո-րոնք յունուարին բողոքեցին Սիւլիւկի «Սատանայի Օջիլ» պասկիլի դէմ։ Պասկիլը տպուած էր Մոսկվայում մի ուսանողի խմբագրութեամբ հրատարակուող «Հանդէս Պատմական և Գրականական» ժողովածուի մէջ, իսկ Մոսկվայի ուսանողների բողոքը՝ «Մուրճ»-ում։ Այդ բողոքողներից մէկը լինելով ես, իմ պարտականութիւնն եմ համարում պատասխանել «Արձագանք»-ի յայտնած մտքին, եթէ ներողամտաբար ենթադրենք, որ այդ առաջնորդողում մի միտք կայ։

Ենթադրենք մի րոպէ, թէ «Արձագանք»-ի խմբագրատանը ամենա-գէտներ են նստած և թէ նորա բոլոր աշխատակիցները «պատնի անունով, գիտուն և ապն» մարդիկ են. տեսնենք իրաւունք ունի արդեօք «Արձա-գանք»-ի խմբագրութիւնը այդպէս արհամարհանքով վերաբերուելու ուսա-նողներին ու նրանց բողոքին։

Բարոյականութեան խնդիրներում ոչ այնքան գիտութիւնն է գեր խաղում, որքան խղճի մաքրութեան ասպիճանը։ Ուրեմն լոկ համբակ բաւը ոչինչ չի ապացուցանում եթէ ոչ այդ խօսքը արտասանողի անբարեխղճու-թիւնը կամ անմտութիւնը։

Ահա թէ ինչումն ենք մենք դատաւոր նստել Սիւլիւկի գլխին. թող ընթերցողը դատի, թէ արդեօք ուսանողները այդ բանում համբակ են թէ ոչ։ Մենք համոզուած էինք՝ 1) որ «Սատանայի Օջիլ»-ը պասկիլ է և անձ-նական, ոչ-հասարակական պասկիլ, 2) որ այդ պասկիլը ձգտում է ան-ուանարկել մի շատ յարգելի անձնաւորութեան, 3) որ պասկիլը, պարտա-ւորութիւնը անբարոյականացնում է դրականութիւնը, 4) որ պասկիլի դոհ դարձած անձնաւորութիւնը առհասարակ, հոգևորականը ևս աւելի, չի կարող պասկիլեանների դրպարտութիւնները հերքելու համար դիմել ոչ լրագրական խօսքի, ոչ էլ դատաստանի օգնութեան, որովհետև նա պասկ-իլի մէջ չի լիչուած յանանէ յանուանէ, 5) որ աչքի առաջ ունենալով այդ բոլորը, հասարակական կարծիքը պարտաւոր է պասկիլեանների ու նրանց քաջալերողներին զսպել՝ դրականութիւնը սրբապղծելուց և յարգելի անձնաւորութիւնների պատիւը ոտնակոխ անելուց, 6) որ գրականան

գործիչների վերաբերմամբ հասարակական կարծիքը կազմում են նրանց գրուածքների ընթերցողները, որոնք իրաւունք ունին և մինչև անգամ պարտական են հարկաւոր դէպքերում իրանց համակրութիւնը յայտնել ուղերձների, պսակների և այլն միջոցով և իրանց դժգոհութիւնը՝ բողոքով։ Եթէ «Արձագանք»-ի խմբագրութիւնը համոզուած է, թէ «Սատանայի Օջիլ»-ը պասկւիլ չէ, թէ պարսաւագրութիւնը գրականական անբարոյականութիւն չէ և այլն, թող հերքի այն բոլոր կէտերը, որ ես վերևը յիշատակեցի։

Բայց քանի որ «Արձագանք»-ը չի հերքել այդ բոլորը և, հաւատացած եմ, չի էլ կարող հերքել, ես իրաւունք եմ համարում ինձ ասել, որ «Արձագանք»-ի խմբագիրները կ լ ա ս ի կ ա կ ա ն համբակներ են հրապարակախօսութեան մէջ։ Ոչ մի հասկացող հրապարակախօս, ազնուութեան մասին հօ էլ չեմ խօսում, իւր պաշտպանութեան տակ չի առնի պասկւիլեանտին և ոչ մի խելքը գլխին հ ա յ լրագրական գործիչ ս ի ս տ ե մ ա տ ի կ ա կ ա ն պատերազմ չի յայտնի ուսանողութեան, ինչպէս այդ արել է «Արձագանք»-ի խմբագրութիւնը։ Ամեն մի առողջ դատողութիւն ունեցող հրապարակախօս պէտք է իւր պարտականութիւնը համարի քաջալերել հայ ուսանողներին գրականութեամբ պարապելու՝ նախ այն տեսակէտից, որ իրանց հասարակութեան կեանքից առհասարակ կտրուած ուսանողները կապ պահեն իրանց ժողովրդի հետ, երկրորդ՝ աչքի առաջ ունենալով մեր մէջ ինտելլիգենտ ոյժերի պակասութիւնը։ Ֆրանսիացի կամ գերմանացի ուսանողը ինքը կրթւում է իւր հայրենիքում հրատարակւող պարբերական թերթերի ազդեցութեան տակ, նա նրանց միջոցով նոր բան հաղորդել, կրթել ընթերցողներին չի կարող, թէև նրանք ազատ կերպով իրանց համակրութիւնն և բողոքը յայտնում են հասարակական գործիչների վերաբերմամբ, և ոչ մի խելքը գլխին հրապարակախօս նրանց այդ առիթով համբակ չի անուանում։ Բոլորովին տարբեր է հայ ուսանողի դրութիւնը։ Հայ գրականական գործիչների մէջ ընդամենը երկու ու կէս ուսումնական մասնագէտ կայ, հայ լրագիրների աշխատակիցներից բարձրագոյն ուսումնարան աւարտողներին մատների վերայ կարելի է հաշուել, իսկ յօդուածագիրների ստուար մեծամասնութիւնը, իւր զարգացմամբ, ուսանողներից ցած է, այնպէս որ հայ ուսանողները լրագրութեան մէջ մասնակցելով ոչ թէ կը ստորացնեն նորա մտաւոր մակերևոյթը, այլ ընդհակառակը կը բարձրացնեն։ Իսկ շնորհակալութիւն կամ դժգոհութիւն յայտնել մի գրականական գործիչի դէմ իրաւունք ունի մինչև անգամ հասարակ ընթերցողը, այն ընթերցողը, որ ոչինչ չի գրում, բայց որի համար է ամեն բան գրւում։

Վերջացնելով նամակս՝ երկու հարց կ՚առաջարկեմ «Արձագանք»-ին։

1) Ինչու «Արձագանքը», հակառակ իւր կարծիքի ուսանողների մասին, մի ժամանակ տպագրում էր ո ւ ս ա ն ո ղ Մ. Բարխուդարեանցի և Գ. Ենգիբարեանցի քննադատական յօդուածները։

2) Ինչու „Արձագանք"-ը „Հանդէս"-ից առաջ սկսեց տպագրել „Սա-

տանալի Օջիլ"-ը, բայց յետոյ ղաղարեցրեց տպագրելը։ Ճիշդ է, որ իմանալով թէ այդ պասկւիլը գրուած է մի յարգելի հոգեւորականի դէմ, խմբագրութիւնը ամաչեց շարունակել տպագրութիւնը։

Թիֆլիս. մայիս։

Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ։

Տ ա ն ո թ. «Մուրճ»-ը, ընդունելով տպագրել իւր էջերում Մոսկւայի հայ ուսանողների բողոքը Սեւլեւկի դէմ, միացրել է իւր ձայնը բողոքողների հետ։ Այդ բողոքի նպատակն էր՝ պաշտպանել մի անձնաւորութիւն, որը, բողոքը ստորագրողների կարծիքով, արժանի է մեծ յարգանքների և որին չը պէտք է թողնել պարսաւած մանաւանդ մի հեղինակի կողմից, որի տաղանդը ամբողջ ազգին յայտնի է։ «Մուրճ»-ի ընթերցողները ամենայն իրաւունքով կարող են պահանջել, որ իրանց յայտնի լինի պաշտպանուողի անձնաւորութիւնը։ Արդ, մենք յայտնում ենք, որ «Մուրճ»-ը, միացնելով իւր ստորագրութիւնը Մոսկւայի 15 ուսանողների ստորագրութիւնների հետ, ենթադրել է, որ «Սատանայի Օջիլ»-ի մէջ պարսաւած անձը՝ Կիւրեղ վարդապետ Սրապեանն է, որի թերեւս միայն ժամանակաւոր հեռանալը իւր պաշտօնատեղից՝ «Արձագանք»-ի (№ 14) թղթակցի վկայութեան համաձայն՝ մեծ յուզում և ցաւ է պատճառել Նոր-Նախիջեւան քաղաքին։

Խմբագր.